Օրինակ նամակ Պաշտօնի նախարարութեան։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան աշխարհին Արարատեան և թուղթ փոխանորդութեան առ քեզ պատուելուդ Տեառն Սմբատայ արտաշատ գաւառէ, և 'ի վերայ երդման և արժանաւորութեան քոյ հաստատեցաք հաւատարմութիւնն քոյ, և շնորհօքն ամենակարօղին յԱստուծոյ և ընդունելութեամբն ամենայն Հայոց ընտրողութեամբն մերոց տանուտէրաց, և 'ի յատկապէս կամաւն Սուրբ հոգոյն Աստուծոյ ելանելով վիճակ պաշտօնի նախարարութեան 'ի անուն քոյ հաստատեցաք մեք և ընդունելի մեզ արարաք, զի արժանի դու պաշտօնի նախարարութեան 'ի յերեսս երկրին հայոց, մեք տանուտէրք հայաստանեաց և փոխանորդք բոլոր յազգին հայոց, եթէ եկեղեցականաց և եթէ հասարակ ժողովրդոց, թէպէտ անձամբ բազումք այլ միաբան 'ի մի կամս և մի խորհուրդս և մի գործս համահաւասար իբրև մի անձն ընդունելով տուաք քեզ պատուելի սմբատայ արտաշատու նամակ Շնորհաց և պաշտօնի նախարարութեան 'ի վերայ ամենայն հայոց և 'ի երեսս բոլոր երկրին հայաստանեաց ժամանակաւ երիս ամաւ, զի տերամբ մերոյ ողորմութեամբ կացցես և մնասցես